ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ
Ուղղափառ հոգեբան խորհրդատու

ՈՒՂՂԱՓԱՌ ՀՈԳԵԹԵՐԱՊԻԱ. ՔՐԻՍՏՈՍՈՎ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՓՈՐՁԸ

Քրիստոնեությունը կարելի է ուսումնասիրել իբրև գիտություն... քանի որ նրանում պարունակվում է այնպիսի սկզբունքների ու մեթոդների ընդարձակ համակարգ, որ օգնում է ավելի լավ ճանաչել մարդու անհատականությունը: ...Համապատասխան պայմանների կատարման դեպքում (որտեղ առանձնակի դեր ունեն հավատքը, համոզվածությունը, մոտեցման համակարգվածությունը) քրիստոնեությունն այնքան տպավորիչ արդյունքներ է տալիս, որ լիովին կարող է համարվել այդպիսի գիտություն... Մենք համոզված ենք, որ Քրիստոսի ուսմունքն ունի գործնական բարձր արժեք:

Ամերիկյան հոգեբան Նորման Պիլ

Հոգևոր սպասավորների և գործնական հոգեբանների միացյալ աշխատանքի ուժը գործնական գիտելիքների ու հմտությունների փոխանակումների մեջ է, միմյանց արժեքների ու փորձառության հանդեպ հարգանք տածելու, իրարից սովորելու կարողության ու ցանկության մեջ:

Վանահայր Եվմենի

Հայաստանի անկախության վերահաստատմամբ վերջապես իրականացավ մեր տառապյալ նախնիների անկախ Հայրենիք ունենալու բաղձանքը: Վերջապես վերահաստատվեց Հայ Առաքելական Ս. Եկեղեցու իրավունքը՝ իր բարերար ազդեցությունը թողնելու մեր բազմաչարչար հայրենակիցների հոգիների և գիտակցության վրա:

Հայաստանյաց Եկեղեցին դարեր շարունակ համաշխարհային մտքի ու գիտության կրողն է եղել հայ իրականությունում: Ներկայումս ՀՀ հասարակական կյանքում նրա կարգավիճակը նշանակալիորեն այլ է: Անշուշտ, դժվար է հավակնել առաջատար դիրքերի գիտության բնագավառում, որ չափազանց խոշոր կապիտալ ներդրումներ է պահանջում: Սակայն գիտության ձեռքբերումների ներդրման պահանջմունքը, մանավանդ հոգեբանության ոլորտից, Եկեղեցու գործունեության մեջ՝ հանուն համայնքի

բարօրության և, ընդհանրապես, հասարակության զարգացման համար, այսօր արդիական խնդիր է։

Խորհրդային Հայաստանում հոգեթերապիայի բնագավառում չեն կիրառվել հոգեբանության գիտական ձեռքբերումները։ Եվ միայն 1988-ի ողբերգական իրադարձությունները պատճառ հանդիսացան արտասահմանյան բարեգործների կողմից մեր Հանրապետություն ներմուծել մի շարք հոգեշտկիչ ու հոգեթերապևտիկ մեթոդներ, որոնց նպատակն էր օգնել երկրաշարժից տուժածներին՝ դուրս գալու հետսթրեսային խանգարումներից։ Այս հապաղումը որոշակի բացասական վերաբերմունք է ձևավորել հայ հասարակական լայն զանգվածներում հոգեբանության և հոգեթերապիայի հարցերի հանդեպ։ Դրությունն ավելի լավ է ուսանողների շրջանում, ովքեր բուհերում ուսանելիս հնարավորություն ունեն հոգեբանության մասին ստանալ համապատասխան գիտելիքներ և տեղեկություններ։

Հայ քրիստոնյա-հոգեբանների ու հոգեբույժների համար ուղեցույց է հանդիսանում Ռուս Ուղղափառ Եկեղեցու սոցիալական կոնցեպցիայի (տեսակետի) վրա հիմնված սոցիալական ծառայությունն այնպիսի հանրահայտ ռուս հոգեբույժ-հոգեթերապևտների, ինչպիսիք են Ավդեևը, Նեվյարովիչը, ինչպես նաև վանահայր Եվմենին և այլոք իրենց կրոնական դավանության, ուղղափառ և բողոքական հոգեբանների ու հոգեթերապևտների գիտական աշխատություններով։

Ներկայացվող նյութի միջոցով փորձենք ծանոթացնել ուղղափառ հոգեթերապիայի սկզբունքների և մեթոդի հետ, հասարակության լայն խավի դատին հանձնենք արդիական խնդիր՝ տեղական ուղղափառ մասնագետների կողմից նմանատիպ փորձի կիրառման հնարավորության ու մշակման հետագա քննարկմամբ՝ Մայր Եկեղեցու օրհնությամբ և նրա հովանու ներքո։

Դ. Ա. Ավդեևը՝ հիմնադիրը հոգեկան հիվանդությունների հանդեպ քրիստոնեական վերաբերմունքի հիմնախնդիրների ինստիտուտի, որի հիմքում ընկած է Ռուս Ուղղափառ Եկեղեցու սոցիալական կոնցեպցիան, ուղղափառ հոգեթերապիայի հետևյալ սահմանումն է առաջադրում. դա հոգու բժշկման ամբողջականացված մոտեցումն է, որ հիմնված է Ընդհանրական, Առաքելական Միասնական Եկեղեցու հավատքի, հոգևոր փորձառության վրա։ Մարդուն օգնությունը ցույց է տրվում երեք միացյալ տեսանկյունով՝ բժշկա-հոգեբանական, սոցիալական, հոգևոր։

Ուղղափառ հոգեթերապիայի հիմնական սկզբունքներն են.

- Ուղղափառ դավանության խոստովանությունը և նրա փրկչական ճշմարտության ու հոգևոր մաքրության ներմուծումը բուժական ընթացքի մեջ։
- Հոգեթերապևտիկ գործունեություն՝ հիմնված սուրբ հայրերի ժառանգության վրա։ Բուժվողներին անհրաժեշտ հմտությունների ուսուցանում, ինքնաճանաչման, հոգևոր կատարելագործման և բարոյական դաստիարակության բնագավառներում։ Աջակցություն հիվանդներին ու տառապյալներին՝ անդամագրվելու Եկեղեցուն (եկեղեցականացվել)։
- Մերժում այն մեթոդների, որոնք կապված են անհատի վրա բռնության, ստի, կեղծիքի, օկուլտա-միստիկական, մեխանիստական հոգետեխնիկաների և այլ հոգեվնաս ներգործությունների հետ։

Ուղղափառ հոգեթերապիայի առանձնահատկությունն այն է, որ նա գործում է երկու եղանակով.

1. զուտ եկեղեցական,
2. գիտա-գործնական։

Առաջինը բնորոշվում է հենց Եկեղեցու հոգեխնամական գործունեության հոգեթերապևտիկ բնույթով, Սուրբ Խորհուրդների ներգործությամբ, ծիսակատարություններով ու կանոնակարգերով, որոնք հիմնել են առաքյալները։ Ուղղափառ հոգեթերապիայի երկրորդ եղանակն է խորհրդատվությունը, ախտորոշումը, պրոֆիլակտիկան ու բուժումը, որն իրագործում են մասնագետ հոգեբույժները և հոգեբանները, ընդ որում, նման թերապիան իրենով չի փոխարինում (ի տարբերություն այլ մեթոդների, մասնավորապես, հոգեվերլուծության) հոգևոր հովվի հոգածությունն ու հոգեխնամությունը։

Մասնագետի բժշկա-տեսական բազան կուտակում է ինչպես աստվածաբանական, այնպես էլ բնական գիտությունների խորը գիտելիքներ։ Դրսևորված է ուղղափառ հոգևոր փորձի ձեռքբերում, շնորհիվ անհատի եկեղեցու լիարժեք անդամ դառնալու, և ներդաշնակորեն դրան հետևող գործնական ավետիսը, որ իրագործվում է մասնագիտական կոչմամբ։

Երկու նշված եղանակներն էլ աշխարհում Եկեղեցու առաքելության իրագործումն են. առաջինը՝ Աստծու ժողովրդի հանդեպ հոգևոր խնամք տածելն է, երկրորդը՝ Եկեղեցու կողմից հասարակությանը սոցիալական ծառայություն մատուցելը։ Ուղղափառ մասնագետը Եկեղեցու հոգեզավակն է, իսկ Եկեղեցու հայրերի և վարդապետների ճանաչողական փորձը չի կարող այլափոխվել որևէ հոգետեխնիկայի, որը կկիրառվի եկեղեցական պատկերացումից դուրս։

Ուղղափառ հոգեթերապիան մարդուն նախապատրաստում է զղջման և ապաշխարության՝ հիվանդության հոգեբանական (կրքային) մեխանիզմների գիտակցման, հուզական նշանակալից ապրումների ակտիվացման, տառապյալի մեջ Աստծո պատկերի վերականգնման համար պահուստային հնարավորությունների վերհանման միջոցներով։

Ուղղափառ հոգեթերապիայի նշանակության երկու հնարավոր գնահատում կա.

1. Պաշտոնական բժշկության տեսանկյունից, երբ մասնագիտական գործունեությունը հանդիսանում է օգնություն ցուցաբերելու հիմքը։ Իսկ Եկեղեցին՝ իր ծառայություններով, պահանջներով, Սուրբ Խորհուրդներով և հոգևոր խնամքի փորձառությամբ բուժումից հետո վերականգնողական փուլ է։
2. Եկեղեցու և մասնագետի, որպես ուղղափառ անձի, տեսանկյունով՝ հոգեթերապևտիկ գործունեությունն իր բնույթով կատեխիզատորական, քարոզչական է, այն առաջին աստիճանն է մինչև հիվանդի Եկեղեցու անդամ դառնալը և փրկության ճանապարհ ոտք դնելը։ Վերելքի երկրորդ աստիճանը բուն կյանքն է Քրիստոսով։

Տվյալ հոգեթերապևտիկ ուղղության սկզբունքային պայմանն այն է, որ այն հիվանդի հանդեպ իրագործվում է ոչ թե պարզապես հոգեթերապևտ-մասնագետի, այլ քրիս-

տոնյա-մասնագետի խոսքի միջոցով: Մասնագետի անձը վճռող դեր է խաղում: Այն մեթոդները, որոնք կիրառվում են ուղղափառ հոգեթերապևտի կողմից, հիմնված են քրիստոնեական մարդաբանության, ճգնակեցության վրա և կիրառվում են դոգմատիկ ու կանոնիկ թույլտվության սահմաններում: Բժիշկն ու քահանան չեն փոխարինում մեկը մյուսին, նրանք Աստծուն համագործակցող մշակներ են:

Ուղղափառ հոգեթերապևտ-մասնագետի աշխարհայացքի կարևորագույն բաղադրիչներն են.

- զերծ լինել մարդու ինքնակենտրոն գաղափարախոսությունից, որի հիմքում ընկած է մարդու ինքնաբավությունը, այն մտածելակերպը, որ աշխարհը կա և պետք է լինի միայն մարդու ոլորտ:
- զերծ լինել «հոգեբանական միարարությունից /մոնոֆիզիտությունից/»՝ նրան հատուկ խորշանքով հանդեպ մարդը և աշխարհը, որպես Աստծու արարչություն, կեղծ առաքինության և չափազանցված՝ սուրբ հայրերի ուսմունքից շեղված ճգնակեցության հակումից:

Ուղղափառ հոգեթերապիան քրիստոսակենտրոն է: Այն գիտա-բժշկական կիրառության մեջ ներմուծում է Ավետարանի ճշմարտացիությունը և մարդու մասին սուրբ հայրերի իմացության հավաստիությունը:

Ուղղափառ հոգեթերապիայի առանձնահատուկ կողմերն են քրիստոնեական գթասրտությունը, բուժական մարդասիրությունն ու քրիստոսասիրությունը՝ համակցված բժշկական ու հոգեթերապևտիկ գիտելիքների օգտագործման հետ: Հոգեթերապիան արդյունք է ունենում, երբ նպաստում է Աստծո գործերին՝ ուղղված մարդու փրկությանը, և իր փրկությունը փափագող մարդու գործերի հանդիպմանը:

Մարդու ապաքինման, նրա հոգևոր պայքարում շնորհի դերն անասելի մեծ է: Հոգևոր ախտորոշումը և հիվանդի մեջ շնորհի ներգործության կամ նրա բացակայության տեսողությունը արձագանքվում է հենց հոգեթերապևտի հոգեվիճակի հետ: Կրքերի դեմ առանց սխրանքի՝ իր համար հոգին ձեռք չի բերում ոչինչ, որ կարող է նրան փրկել կամ մոտեցնել Աստծու սիրուն և չի ապաքինվում: Տառապող հիվանդը ընկալվում է և՛ որպես ճգնավոր, և՛ որպես մեղավոր, որ գերված է կրքերով: Նրա համար փրկագործական միջոցներ են.

- մահվան հիշողությունը, այն գիտակցությամբ, որ ամենաահավորը հոգևոր մահն է,
- ողբալը իր մեղքերի համար,
- խոնարհությունը
- պահքը

Բառնաբաս եպիսկոպոսի “Основы искусства святости” աշխատությունով սկզբնավորվել է մի գործ, որով Ս. հայրական հոգեբանությունը համեմատվում է աշխարհիկի հետ: Նման հետազոտությունն արդիական է՝ նպատակ ունենալով հոգևորը ներմուծել բժշկա-հոգեբանական ոլորտ՝ բացառելով ավետարանական բառամթերքի կիրառման շահարկումը: Հոգևոր փորձառությունը չի կարելի հանգեցել միայն այնպիսի կարևոր հասկացությունների, ինչպիսիք են հավատքն ու կրոնականությունը: Վերջիններս հաջող ներմուծված են արևմուտքի որոշ հոգեթերապևտիկ ուղղությունների

և մեթոդների մեջ և դրանցում գտել են իրենց արժանի տեղը։

Քրիստոսի Եկեղեցին եղել է, կա և կլինի մարդկանց ճշմարիտ հոգևոր բուժման հաստատությունը։ Քրիստոնեական մարդաբանության մեջ անհատը դիտվում է հոգևոր, հոգեկան ու մարմնական դրսևորումների միասնությամբ, որը հասանելի է միայն հոգու գերակայության դեպքում։ Այդ միասնությամբ է պայմանավորված մարդու առողջությունը, նրա կեցության կանոնավորությունը։ Բնակչության մեծամասնության կտրվածությունը եկեղեցական ավանդություններից կապված է պատմական բնույթի օբյեկտիվ հանգամանքների հետ, սակայն դրանք ժառանգելուց հրաժարվելը հոգևոր տգիտության դրսևորում է։

Հոգեկան հիվանդների մեծամասնության գիտակցության մեջ հենց Եկեղեցին է, որ պետք է հանդիսանա որպես մշտական գործող վերականգնողական հանրային ինստիտուտ։ Նրանք Եկեղեցու սպասավորներից ակնկալում են հոգեթերապևտիկ օգնություն, հոգևորականներին դիմում են խնդիրներով, որոնք վերաբերվում են հոգեթերապևտների իրավասությանը։ Նշված փաստերը, ինչպես նաև երկար տարիների փորձառություն ունեցող հոգևորականների հետ զրույցները, ցույց են տվել, թե ինչքան արդիական է ուղղափառ մասնագետների՝ հոգեբանների ու հոգեբույժների, ընդգրկումը Եկեղեցու հոգեխնամ գործնական ոլորտ։ Եկեղեցու օրհնությամբ, ուղղափառ հոգեթերապիայի ծառայությունը հնարավորություն կընձեռի ծխական համայնքներում ներդնել գիտական այդ բնագավառի վերջին նվաճումները, ինչը հոգևորականներին կօգնի կրել իրենց ծանր լուծը, քանի որ նրանք չեն հասցնում լիովին հոգալ հոտի անդամների և՛ հոգևոր, և՛ հոգեկան-հոգեբանական կարիքները։ Միաժամանակ, հավատացյալների համար մեկընդմիշտ կլուծվի իրենց քրիստոնեական համոզմունքներին չհակասող հոգեթերապևտիկ օգնություն ստանալու հարցը։

Մյուս կողմից, հասունացել է հենց հոգևորականներին ուսուցանելու հոգեբանական խորհրդատվության ընդհանուր գիտելիքների անհրաժեշտությունը, ինչը կբարձրացնի նրանց հոգեխնամ գործունեության արդյունավետությունը, զերծ կպահի սխալներից, ծառայությունը կդարձնի ավելի գրավիչ ու հոգեշահ ՀՀ այն քաղաքացիների համար, որոնք հայտնվել են չափազանց սթրեսային իրավիճակներում։ Հոգևոր առաջնորդի խորհրդատվության նման փորձը լայն տարածում ունի արևմտյան երկրներում։

ՀՀ բուհերի հոգեբանական ֆակուլտետների և հոգեբան-գիտնականների մեծացող թիվը մեզ լավատեսություն է ներշնչում, որ հնարավոր է ստեղծել ուղղափառ հոգեթերապիայի հայկական դպրոց, որը կհիմնվի գիտական ուսումնասիրության ու մեր սուրբ հայրերի ժառանգության կիրառման վրա՝ եկեղեցու կյանքով ապրող քրիստոնյա-մասնագետների ուժերով։

Հասարակության առողջացման ու հոգևոր վերահառնման գործում Եկեղեցու այս բնագավառում նպատակադրված ջանքերն արդյունավետ կլինեն մեր պետականության կառուցման ու հաստատման համար։